



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԳ. ՏԱՐԻ, ԹԻԻ 14.

1855

ՅՈՒԼԻՍԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ե.

Բնական խնամք : (Տես կրես 161)

2. Օրոյն քարկիստեղծութիւնը :

Տաքն ու պաղը, չորն ու թացը կենդանական գործողութեանց վրայ մեծ ազդեցութիւն ունին : Եւս կողմանէ ընելու զգուշութիւնները շատ են և պէտք է լաւ մտածել, առաջուց հոգալ ու միշտ անխոնջութեամբ ընել :

Տարակոյս չկայ որ թացութիւնը տղայոց առողջութեանը աւելի փնասակար է՝ քան թէ չափազանց տաքը կամ պաղը : Եւ շատ զգուշանալու բան է

յանկարծ պաղէն տաք անցնիլը, և մանաւանդ տաքէն պաղը, և որչափ որ կարելի է՝ պէտք է զգուշութիւն ընել :

Ստուրներու թացութիւնը շատ անգամ տղոց տկարութեանը, նաև հիւանդութեանցը պատճառներէն մէկն է :

Եւ ջրի ցուրտերը, առջի անձրևները նոյնպէս մանաւոր կերպով զգալի ու փնասակար են, և պէտք է մեծ զգուշութեամբ տղայոց փափուկ գործարանները անոնց փնասակարութիւններէն պահպանել :

Հոս տեղս կրնայի շատ մանր պարա-
գաններու իջնալ ու իմ ըրած փորձերս
պատմել, սակայն այս գրքիս սահմանը
թոյլ չտար . բայց թերեւս օր մը յաջող
առիթ մը գտնամ զայն կատարելու :

Է. Բժշկական խնամքներ :

Մինչև հիմա առողջութեան պահ-
պանութեանը համար հարկաւոր եղած
զգուշութիւններու ու խնամքներու վը-
րայ խօսեցանք : Հիմա տեսնենք բժշ-
կական խնամքները , որ առողջութեան
կորուստը դարմանելու կը ծառայեն :

Վաստիարակութեան տեղոյ մը
համար ամենահարկաւոր է բժիշկ մը
ընտրել : Որչափ որ կարելի է ընտրուա-
ծը ճարտար պէտք է ըլլայ , բայց մանա-
ւանդ շատ հոգ տանող , շատ ուշադիր ,
շատ նախատես ու շատ անձնանուէր
ըլլայ . որովհետեւ տղաքը անուշադիր ,
ետեւին առջեւնին չմտածող են , ու ի-
րենց վրայ անհոգ կ'ըլլան :

Պէտք է որ բժիշկը շատ անգամա-
նոնց հիւանդութիւնը գուշակէ , և
միանգամայն սիրտն ալ ազդէ իրեն ինչ
որ իր միտքը իրեն յայտնէ :

Որչափ որ կարելի է՝ հարկաւոր է
որ այդ բժիշկը տղայք սիրող ըլլայ ու
վարժ զանոնք դարմանելու : Լ.յս բա-
նիս կողմանէ՝ թէ որ որդւոց հայր ըլլայ ,
շատ անգամ դիտմունքդ կը յաջողի :

Պէտք է որ բժիշկը ամէն օր անվրէպ
այցելութեան գայ , թէ և հիւանդ մըն
ալ չըլլայ :

Նանք հիւանդութեան մը սկիզբը
երբ տղայ մը հիւանդանոցը կը փոխա-
դրուի , իրեն ծնողացը կամ խնամակալ
ներուն մէկէն պէտք է ազդել : Թէ
որ հիւանդութիւնը երթալով ծան-
րանայ , առանց ուշանալու պէտք է ա-
ռջարկել որ իրենց հաւնած բժիշկնե-
րուն խորհրդակցութիւն մը ընել տան :

Հոս տեղս իմ խօսակցութիւնս ըն-
դարձակ բռնելու տեղ՝ կը կտրեմ , և ա-
նոնց առջին՝ որ այս նիւթոյս վրայօք ա-
մենեւին ծանօթութիւն չունին , կարելի է
մեղադրելի ալ ըլլամ որ երկար խօսեցայ :

Լ.յս գլուխը գրելու ատենս , և վե-
րոյիշեալ բոլոր զգուշութիւնները նշա-
նակած ատենս , յայտնի է որ իմ մտա-
ծութենէս բոլորովին հեռու էր այնպի-
սի բան մը խորհուրդ տալ՝ որ տղաքը
մեղկացընելու ծառայէ . ընդհակառակն
ես այն կողմն եմ՝ թէ պէտք է այն ա-
մէն բան ընել , որ զանոնք կրնայ ու-
ժովցընել , և մեծ հաճութեամբ Մոն-
դէսէին խօսքը կը կրկնեմ՝ դաստիարակ-
ներու և ծնողաց :

« Սարժեցուր զինքը քրտինքի ու
,, ցրտի , հովի , արեւու ու ամէն նեղու-
,, թիւններու , զորոնք պէտք է որ տը-
,, ղան աչքն առնէ . իրմէն հեռու բըռ-
,, նէ ամէն կերպ փափկութիւն և մեղ-
,, կութիւն հագուստի ու պառկելու ,
,, ուտելու ու խմելու կողմանէ . ամէն
,, բանի վարժեցուր , որպէս զի չըլլայ
,, գեղեցիկ ու զեղծ պատանի մը , հա-
,, պա առոյգ ու զօրաւոր երիտասարդ
,, մը » :

Լ. յուցընելէս ետեւ թէ Ֆենելոն
ինչպէս կ'ուզէր որ Վաղղիոյ արքայոր-
դիքը մեծնան , հոստեղս խօսքիս ետքը
սիրով կը դնեմ այն մանրամասն տեղե-
կութիւնները , ինչ որ տրուեցաւ մեզի
մարմնոյ խիստ կրթութեանց վրայ , ո-
րոնց զանոնք վարժեցընելը պարտք սե-
պեր էին :

« Լ.յն կրթութիւնները , որ տղոցը
,, ընել կու տան , այնպիսի են՝ որ Վա-
,, ըիզու քաղաքացիներէն և ոչ մէկը կը
,, համարձակի իր տղաքը այնպիսի
,, խիստ կրթութեան տակ ձգել , և
,, հարկ է խոստովանիլ՝ որ եթէ անոնք
,, ասոնց պէս առողջ չըլլան , վտանգա-
,,ւոր կ'ըլլայ այն փորձը . երբոր դուրս
,, ելլեն՝ ոչ երբէք գլուխնին կը գոցեն ,
,, բայց եթէ ձիու վրայ որ ըլլան կամ
,, թէ անձրեւ գայ . վասն զի որչափ
,, տաք ըլլայ , որչափ ցուրտ , և ինչ
,, հով որ փչէ , գրեթէ միշտ գլուխնին
,, բաց կը բռնեն , և այս բանիս այն-
,, պէս վարժած են , որ իրենց գլխարկը
,, գլուխնին չեն կրնար դնել , և ամե-
,, նափոքր անհանգստութիւն մըն ալ

„ Զէն զգար : Ալ երբէք իրենց դեղ մը
 „ կ'ընեն , և բնաւ ոչ մաքրողական
 „ դեղ և ոչ արիւն առած են . բայց
 „ երբեմն Զերմը բռնած է զիրենք , ու
 „ քիսաքիս միայն տուած են : Այլ որ
 „ ուրիշ աւելի ծանր հիւանդութիւն մը
 „ ունենային , տարակոյս չունիմ՝ որ
 „ այնպիսի ատեն բժշկաց խորհրդին կը
 „ հետեւէին :

„ Իրենց շրջագայութեանցը ատեն ,
 „ որ ըստ կարգի ամէն օր կ'ըլլայ , ա-
 „ մառ ձմեռ , օդը ինչպէս ալ ըլլայ , կը
 „ քալեն , կը վազեն որչափ որ կ'ուզեն ,
 „ թէ ոտքով եղեր է և թէ ձիով , և
 „ շատ անգամ կը քրտնին ալ , բայց չա-
 „ պիկնին ամենեւին փոխել չեն տար :
 „ Ս'իայն գնտակախաղէն ետքը այս
 „ տարբերութիւնը կ'ըլլայ՝ որ շապիկ-
 „ նին կը փոխեն , բայց այն ալ ոչ վրանին
 „ կը շփեն , և ոչ պառկել կու տան :
 „ Ս'էկ խօսքով՝ այնպէս կը կրթեն , ի-
 „ բրև թէ օր մը ըմբիշ պիտի ըլլան ,
 „ և Պովիլէի դուքսը այնպէս համո-

„ զուած է թէ տկար իշխան մը բանի
 „ չգար , մանաւանդ Վաղղիոյ մէջ , ուր
 „ հարկ է որ իշխանը անձամբ իր բա-
 „ նակին հրամայէ , որ այս կողմանէ
 „ մարդ ինչ դիպուած ալ կարենայ մտա-
 „ ծել , բնաւ իրեն այս միտքը փոխել
 „ չկրցան . և ինչուան հիմա , փառք ի՞նչ
 „ տուծոյ , անոնց դիպուած մ'ալ չհան-
 „ դիպեցաւ , և ընդհակառակն՝ իրենց
 „ առողջութիւնը այնպէս կատարեալ
 „ է , ու այնպէս զօրաւոր կազմուածք
 „ ունին , որ և ոչ պզտի տկարութիւն
 „ մը զգացած ունին : Ս'իայն երբեմն
 „ կը հանդիպի որ հարբուխ ըլլան .
 „ բայց այն ատենն ալ իրենց սովորա-
 „ կան վազվռտելէն ետ չեն կենար ,
 „ միայն թէ հարբուխը խիստ սաստիկ
 „ ըլլայ , ու ասանկով ամենեւին բանի
 „ տեղ չեն դնէր , :

Տղոց դաստիարակութեան մէջ այս-
 պէս պէտք է ըլլան մարմնոյ խնամքնե-
 րը և ընտանեկան ու դարմանողական
 հոգը :

Բ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք ,

կ ա մ

Մ Ե Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ա Ր Դ Ո Յ

Մարդ՝ քրեոսքեան ծընունդ եւ տէր :

ԼՍԾԵՐԳԻՆ

Երբեմն ի բնութեան համատարած անդր յերեւոյթ
 կըրկնատեսակ զաչս իմ յառեալ փոյթ ընդ փոյթ ,
 ի մեծապահնչ ծալ ի ծալ քօղ զիշերոյն ,
 Զորով ակունք ընդելուզեալ՝ մէն մի արփիք են անհուն .
 Յարփիական գունտ լուսավառ ,
 Որ զմիջոցին անբաւութիւն լըցեալ ծածկէ անըսպառ .
 Ընդ բարձրութիւն՝ որ ընդ երկին եւ երկիր ,
 Եւ ընդ լերինս՝ որ երկոցուն թըւին արկեալ ծոցալիր .
 Յահեղազօր ծովուց շառաչ եւ ծըփանս ,
 Որ հատանեն զաչաց սահմանս .
 Յըստորերկրեայ հուր բոցալոյս ,
 Որ երկրածոյլ շանթ արձակին յերկնից կոյս .
 Ընդ գետս՝ լերանց խարիսխ պաղպաղափայլ եւ անկայուն ,
 Որ թըռչանաց նոցուն՝ դ երկինս՝ թըւին զերկրաւ շուք զընայուն .
 Ընդ անապատս անպարագիծ՝ ովկեանս ահեղ աւազոյ ,
 Իբրեւ ըզնա ծըփանուտ , եւ զընկենուն ըզհետս մարդոյ .